# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 66

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-Ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի պահանջներով, Արենի համայնքի ավագանին *որոշում է*՝

Տալ համաձայնություն.

1. Արենի համայնքի Չիվա բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող

1) 0.01393 հա (ծածկագիրը՝ 10-036-0119- նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը մրցույթով, 25 տարի ժամկետով, վարձակալությամբ հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի տարեկան զուտ եկամտի 15%-ից ոչ պակաս՝ 3000 ՀՀ դրամ:

2) 0.00771 հա (ծածկագիրը՝ 10-036-0118- նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը մրցույթով, 25 տարի ժամկետով, վարձակալությամբ հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի տարեկան զուտ եկամտի 15%-ից ոչ պակաս՝ 2000 ՀՀ դրամ:

3) 0.04138 հա (ծածկագիրը՝ 10-036-0118- նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը վարձակալությամբ, 25 տարի ժամկետով, մրցույթով հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողի տարեկան զուտ եկամտի 15%-ից ոչ պակաս՝ 4000 ՀՀ դրամ:

4) 0.03000 հա (ծածկագիրը՝ 10-036-0117- նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ այլ) հողամասը վարձակալությամբ, 25 տարի ժամկետով, մրցույթով հատկացնելու համար: Հողամասի մեկնարկային գինը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 1%-ից ոչ պակաս՝ 5000 ՀՀ դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
22, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 65

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին *որոշում է՝*

Հաստատել Արենի համայնքի 2017թվականի տարեվերջյան գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն սույն որոշման հավելվածների՝ հիմք ընդունելով գույքագրման հանձնաժողովի կողմից հաստատված ցուցակները:

Կողմ -10 Դեմ -1 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ
ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ
ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ
ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ
ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ
ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ
ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 64

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԱԽԿԻՆ ՊԱՀԵՍՏԻ ՇԵՆՔԸ (ՄԱԿԵՐԵՍԸ՝ 521 ՄԵՏՐ ՔԱՌԱԿՈՒՍԻ, ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ 10-025-0130-0059-001, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ՝ N 07072017-10-0002) ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ «ՔՅՕՇ» ՍՊԸ-ԻՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետը, Արենի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Արենի համայնքի Խաչիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող նախկին պահեստի շենքը (մակերեսը՝ 521 մետր քառակուսի, ծածկագիրը՝ 10-025-0130-0059-001, սեփականության վկայական՝ N 07072017-10-0002) նվիրատվությամբ հատկացնել «ՔՅՕՇ» ՍՊԸ-ին վերջինիս կողմից Խաչիկ բնակավայրում շամպայն-գինիների գործարան հիմնելու նպատակով:

2. Առաջարկել Արենի համայնքի ղեկավարին <<ՔՅՕՇ>> ՍՊԸ-ի հետ կնքել նվիրաբերության պայմանագիր՝ որում պարտադիր ներառվեն.

ա) <<ՔՅՕՇ>> ՍՊԸ-ն պարտավորվում է 2 տարվա ընթացքում ավարտել և շահագործման հանձնել իր կողմից ներկայացրած ծրագիրը՝ հակառակ պարագայում պայմանագիրը համարել ուժը կորցրած:

բ) Նվիրատվությամբ հատկացված շենք-շինությունները և հողատարածքը ենթակա չեն օտարման կամ վարձակալությամբ տրամադրման առանց Արենի համայնքի ավագանու որոշման:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
22, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 63

### 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼ-ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ «ԱՐԵՆԻ» ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին **որոշում է՝**

2018 թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում <<Արենի>> ՀՈԱԿ-ի կողմից կատարված աշխատանքների մասին համայնքի ղեկավարի հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -11　　　　Դեմ -0　　　　Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝　　　　ՀՈՎԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արենիի համայնքապետարանի 2018 թվականի
հունիսի 22-ի N 63 որոշման

## 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ «ԱՐԵՆԻ» ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՎ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Աղյուսակ 1. Կատարված աշխատանքներ

| ԲՆԱԿԱՎԱՅՐ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԾԱԽՍ (ՀՀ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| Արենի | «Չամ» հանդամասի ոռոգման մայր առուների վերանորոգում | 338.150 |
| | «Խաչի տակ» թաղամասի ոռոգման ջրագծի վերակառուցում | 984.210 |
| | Ոռոգման մայր առուների մաքրում էքսկավատորով | 921.830 |
| | Քարատակ հանդամասում ոռոգման խողովակաշարի վերանորոգում | 760.000 |
| | Ոռոգման ջրագծի ապամոնտաժում և տեղափոխում | 678.490 |
| Ընդամենը Արենի բնակավայր | | 3.682.680 |
| Գնիշիկ | Դպրոցի դասասենյակի և միջանցքի վերանորոգում | 499.570 |
| Ընդամենը Գնիշիկ բնակավայր | | 499.570 |
| Ելփին | Գերեզմանների համար էլեկտրասյուների և էլեկտրական գծերի կառուցում | 375.600 |
| | Մշակույթի տան ներքին հարդարման աշխատանքներ | 715.170 |
| Ընդամենը Ելփին բնակավայր | | 1.090.770 |
| Չիվա | Ոռոգման ջրագծի մաքրում էքսկավատորով | 732.700 |
| | Դպրոցի խոհանոցի վերանորոգում | 300.100 |
| | Ընդամենը Չիվա բնակավայր | 1.032.800 |
| Ռինդ | Դպրոցի տանիքի մասնակի վերանորոգում | 335.900 |
| | Ոռոգման ջրագծերի մաքրում | 231.150 |
| | «Փառքի պուրակ» այգու հողային աշխատանքներ | 88.900 |
| | Խմելու ջրագծի վերանորոգում | 351.240 |
| | Դպրոցի ճաշարանի կոյուղագծի կառուցում | 115..210 |
| Ընդամենը Ռինդ բնակավայր | | 1.122.400 |

Աղյուսակ 2. Ձեռնարկված և ընթացքի մեջ գտնվող աշխատանքներ

| ԲՆԱԿԱՎԱՅՐ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ |
|---|---|
| Ագարակաձոր | Դեպի հանդամասեր և արոտավայրեր ճանապարհների բարեկարգում: |
| Արփի | Կոյուղագծի վերանորոգում |
| Ելփին | Խմելու ջրագծի կառուցում |
| Գնիշիկ | Դեպի Մոզրով և Գնիշիկ ճանապարհների բարեկարգում: |
| | Խմելու և ոռոգման ջրագծի վերանորոգում |
| | Թվով 2 գերեզմանների բարեկարգում |

Աշխատակազմի քարտուղար Գևորգ Սիմոնյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 62-Ն

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24.03.2018ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 38 և ԹԻՎ 43-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Արենի համայնքի ավագանու 24.03.2018թվականի թիվ 38 որոշման մեջ.

ա) Հղման «Բյուջետային համակարգի մասին» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> բառերով,

բ) Հերթական համարից հետո ավելացնել «Ն» տառը,

գ) Հավելված 1-ը խմբագրել նոր շարադրությամբ՝ Արենի հողի օտարումից մուտքեր գործառնական դասակարգման 29բաժնի,50 խմբի 00դասի եկամտատեսակում ավելացնել 14 մլն ՀՀ դրամ, Արենի գույքի օտարումից մուտքեր գործառնական դասակարգման 29բաժնի,51 խմբի 00դասի եկամտատեսակում ավելացնել 950հազար ՀՀ դրամ, համայնքի բյուջե մուտքագրման այլ եկամուտներ գործառնական դասակարգման 28բաժնի,50 խմբի 00դասի եկամտատեսակում ավելացնել 2.5 մլն ՀՀ դրամ,

2. Արենի համայնքի ավագանու 24.03.2018թվականի թիվ 43-Ն որոշման մեջ ավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի,

Կողմ -11 | Դեմ -0 | Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արենի համայնքի ավագանու

2018 թվականի հունիսի 22-ի թիվ 62-Ն որոշման

Եկամտային մաս.

հազար դրամ

| **Եկամտատեսակ** | Նախատեսված /տարեկան/ | Կատարողական /տարեկան/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | 19051,2 | 18701,3 | 98,2 |
| Գույքահարկ | 27569,7 | 29259,6 | 106,1 |
| Տեղական տուրքեր | 1740,4 | 2183,4 | 125,5 |
| ընդամենը գույքի վարձակալությունից եկամուտներ | 13173,0 | 13481,6 | 102,3 |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 204242,8 | 204242,8 | 100,0 |
| Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ | 1867,2 | 1867,2 | 100,0 |
| Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհիներ | 3300,0 | 7708,9 | 233,6 |
| **Այլ եկամուտներ**/Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ,օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/ | 17498,0 | 23924,9 | 136,7 |

| **Ծախսային մաս** | Նախատեսված /տարեկան/ | Կատարողական /տարեկան/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 137630,2 | 136805,0 | 99,4 |
| Պարգևատրումներ | 3298,6 | 3239,2 | 98,2 |
| Էներգետիկ ծառայություններ | 10367,7 | 8915,3 | 86,0 |
| Կոմունալ ծառայություններ | 1370,0 | 1110,0 | 81,0 |
| Կապի ծառայություններ | 2355,0 | 1726,1 | 73,3 |
| Գործուղումների և շրջագայությունների ծախսեր | 1928,9 | 1495,7 | 77,5 |
| Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում | 6676,2 | 4047,9 | 60,6 |
| Դրամաշնորհիներ | 76411,1 | 73262,1 | 95,9 |
| Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 11257,5 | 9506,0 | 84,4 |
| Այլ ծախսեր | 1513,3 | 593,1 | 39,2 |
| Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում, շինարարություն | 91580,3 | 57470 | 62,8 |
| Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ | 16321,4 | 14960,1 | 91,7 |
| | 360710,2 | 313130,5 | 86,8 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳԵՎՈՐԳ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
22, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 61

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 24.03.2018ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 30 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով. Արենի համայնքի ավագանին **որոշում է**

Ուժը կորցրած ճանաչել Արենի համայնքի ավագանու 24.03.2018թվականի «Արենի համայնքի ավագանու 19 հունվարի 2018 թվականի թիվ 2 որոշման 6-րդ հավելվածում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 30 որոշումը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 60

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐՎԵԼԻՔ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին *որոշում է՝*

Հաստատել Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, աճուրդային կարգով օտարվելիք գույքի ցանկը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված Արենի համայնքի ավագանու

2018թ-ի հունիսի 22-ի թիվ 60 որոշման

| Բնակավայր | Հողատեսք | | |
|---|---|---|---|
| | Գյուղատնտեսական նշանակության /հա/ | Տնամերձ /հա/ | Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության /հա/ |
| ԱՐԵՆԻ | 6 | 1 | 1,5 |
| ԱՐՓԻ | 10 | 0 | 0 |
| ԱՂԱՎՆԱՁՈՐ | 1 | 0,850 | 1 |
| ԱԳԱՐԱԿԱՁՈՐ | 2 | 2 | 0 |
| ԵԼՓԻՆ | 5 | 4 | 0 |
| ՉԻՎԱ | 5 | 1,5 | 0 |
| ԽԱՉԻԿ | 0 | 0,3500 | 0 |
| ՌԻՆԴ | 19 | 2,250 | 0 |
| ԳՆԻՇԻԿ | 0 | 2 | 1 |

Աշխատակազմի քարտուղար Գ. Սիմոնյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 59

### <<ՏՐԻՆԻՏԻ>> ՍՊԸ-Ի ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի N 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1918-Ն որոշումը՝ Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Տալ համաձայնություն Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, <<Տրինիտի>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.2121հա (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-006-0312-0047) հողամասից 0.008հա-ի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության:

2. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, <<Տրինիտի>> ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.47664հա (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, կադաստրային ծածկագիրը՝ 10-006-0350-0001) հողամասից 0.026հա-ի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության:

3. Առաջարկել Արենի համայնքի ղեկավարին կազմել հողաշինական գործ և ներկայացնել ՀՀ վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի

օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» հաստատմանը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ - ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 58

### ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.72ՀԱ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ <<ԳՆԻՇԻԿԻ ԽԱՉ>> ՍՊԸ-ԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության օգտակար հանածոյի արդյունահանման ՇԱԹՎ-29/437 թույլտվությունը, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ համաձայնություն Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, Արենի համայնք, գյուղ Գնիշիկ 2-րդ փողոց թիվ 5 հասցեում գտնվող, 0.72հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը վարձակալությամբ հատկացնել <<Գնիշիկի խաչ>> ՍՊԸ-ին:
2. Տարեկան վարձավճարը սահմանել հողամասի կադաստրային արժեքի 1%-ից ոչ պակաս 100հազար ՀՀ դրամ:
3. Վարձակալության ժամկետ սահմանել հիմք ընդունելով օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության ժամկետը մինչև 20.04.2035թ.:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
22, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 57

## ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՑ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղից սույն որոշման հավելվածում առկա գյուղատնտեսական տեխնիկան նվիրաբերությամբ ստանալու և տնօրինելու համար:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված Արենի համայնքի ավագանու

22.հունիսի 2018թվականի թիվ 57 որոշման

| | Անվանում | Նկարագիր | Քանակ /հատ/ | Միավորի արժեքը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր արժեքը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տրակտոր Բելառուս | 82.1,տեխնիկական վկայագրի համար՝ 019783, պետհամարանիշ՝ 42-98LS | 1 | 8.390.000 | 8.390.000 |
| 2 | Խոտի մամլիչ | ППТ-041 Tukan | 1 | 5.500.000 | 5.500000 |
| 3 | Մոտոբլոկ | <<НЕВА>>МБ2-С7.5PRO | 1 | 520.000 | 520.000 |
| 4 | Ռոտորային փոցխ | ГР-700П | 1 | 4.700.000 | 4.700.000 |
| 5 | Գութան | ПЛН-3-35П | 1 | 680.000 | 680.000 |
| 6 | Շարքացան | СЗУ-3.6 | 1 | 5.300.000 | 5.300.000 |
| 7 | Խոտ հնձիչ կախովի | КС-Ф-2.1Б | 1 | 550.000 | 550.000 |
| 8 | Խոտի հնձիչ | 9/121GE | 1 | 850.000 | 850.000 |
| 9 | Կցասայլակ | <<НЕВА>> | 1 | 160.000 | 160.000 |
| 10 | Կցագործիք խոտհնձիչ | <<НЕВА>> | 1 | 150.000 | 150.000 |
| 11 | Բուկլից 2 խոփով | <<НЕВА>> | 1 | 30.000 | 30.000 |
| 12 | Գութան | <<НЕВА>> | 1 | 14.000 | 14.000 |
| 13 | Կցամաս ունիվերսալ | <<НЕВА>> | 1 | 14.000 | 14.000 |
| 14 | Կարտոֆիլահան | <<НЕВА>> | 1 | 10.000 | 10.000 |
| | Ընդամենը | | | 26.868.000 | 26.868.000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Գևորգ Սիմոնյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆԻՍԻ 2018թվականի N 56

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22 ՀՈՒՆԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով, Արենի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արենի համայնքի ավագանու 22 հունիսի 2018 թվականի թիվ 7 նիստի հետևյալ օրակարգը՝

1. Արենի համայնքի ավագանու 22 հունիսի 2018 թվականի թիվ 7 նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղից նվիրաբերությամբ գյուղատնտեսական տեխնիկա ստանալու և տնօրինելու համաձայնություն տալու մասին:

3. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող 0.72հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասը «Գնիշիկի խաչ» ՍՊԸ-ին վարձակալությամբ հատկացնելու համաձայնություն տալու մասին:

4. <<Տրինիտի>> ՍՊԸ-ի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու համաձայնություն տալու մասին:

5. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող, աճուրդային կարգով օտարվելիք գույքի ցանկը հաստատելու մասին:

6. Արենի համայնքի ավագանու 24.03.2018թվականի թիվ 30 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին

7. Արենի համայնքի ավագանու 24.03.2018թվականի թիվ 38 և թիվ 43-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին

8. 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում «Արենի» ՀՈԱԿ-ի կողմից կատարված աշխատանքների մասին համայնքի ղեկավարի հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին:

9. Արենի համայնքի խաչիկ բնակավայրում գտնվող նախկին պահեստի շենքը (մակերեսը 521 մետր քառակուսի, ծածկագիրը՝ 10-025-0130-0059-001 սեփականության վկայական՝ N 07072017-10-0002) նվիրատվությամբ <<ՔՅՕՇ>> ՄՊԸ-ին հատկացնելու մասին:

10.Արենի համայնքի 2017թ-ի տարեվերջյան գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

11. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից վարձակալությամբ հատկացնելու համաձայնություն տալու մասին:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԵՎԱԿ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԱՐԳՍՅԱՆ ԲԱԲԿԵՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԺՈՐԻՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ